# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԻԶԻՐՅԱՆԻՆ՝ ԵՐԿԱՐԱՄՅԱ ՀԱԳԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԱՆԳՍՏԻ ԱՆՑՆԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԻԶԻՐԵԱՆ, ՈՐ Ի ԼՈՆԴՈՆ, ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻԱ

Հայոց Հայրապետիս համար հանապազ անսահման բերկրանք է գովեստի խօսքեր ասել մեր նուիրեալ հոգեւորականաց, որոնց բազմաբեղուն ծառայութիւնը մեր Եկեղեցուն բնորոշւում է իբրեւ «զհետ երթալ բարեաց» եւ «ծառայել Աստուծոյ», քանզի նրանցով է կանգուն Առաքելական մեր Մայր Եկեղեցին, զօրեղ՝ մեր միաբանութիւնը, շէն ու պայծառ՝ Սուրբ Աթոռը Լուսոյ Խորան Էջմիածնի:

Սիրելի Սրբազան. առաւել, քան կէս դար Դուք, իբրեւ հովիւ քաջ ու հովիւ բարի, նուիրեալ ու անսակարկ ծառայութիւն էք բերում Լուսաւորչապսակ մեր Սուրբ Եկեղեցուն: Հովուական սպասաւորութեան առաջին քայլերը սկսելով Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռից, երկար փարիներ Դուք նախանձախնդիր ու սիրառատ ոգով հոգեւոր սնունդ էք ջամբել Մեծն Բրիտանիոյ հաւատաւոր մեր զաւակաց եւ մեծ աւանդ բերել նրանց հաւատքի զօրացմանն ու ազգային-եկեղեցական կեանքի պայծառացմանը:

Տարիների հեռաւորութիւնից ուրախ ենք այսօր արձանագրելու, որ Սրբալոյս Միւռոնը, որպէս «մաքուր կաթն անարատ ստեանց Մօրն Լուսոյ Սրբոյ Էջմիածնի», երիցս պսակելով Ձեր ճակատը իբրեւ Քրիստոսի եւ Եկեղեցու քաջարի զինուորի, շնորհընկալն է դարձրել Ձեզ հաւատաւոր մեր զաւակաց հայրենակարօտ հայեացքները Լուսաւորչեան մշտավառ կանթեղին ուղղելու:

Սիրելի Սրբազան. յաւարտ Ձեր ծառայութեան՝ իբրեւ Հայրապետական Պատուիրակ եւ Անգլիայի հայոց առաջնորդ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապե-

պական Մեր օրհնութիւնն ու խորին գնահատանքն ենք բերում Ձեզ եւ գոհութիւն ու փառք առ Աստուած վերառաքում, որ Ձեր երկարամեայ սպասաւորութեան փարիները արդիւնաշատ են անձնամատոյց հաւատով ու սիրով իմաստաւորուած եկեղեցաշէն գործերով, ազգաշահ բազում յաջողութիւններով ու ձեռքբերումներով:

Սիրելի Սրբազան. աղօթում ենք առ Բարին Աստուած եւ հայցում, որ Ամենակալ Տէրը Իր հանապազ օրհնութեան եւ ողորմութեան ներքոյ քաջառողջ արեւշատութիւն ու բիւր բարիքներ պարգեւի Ձեզ՝ ազնիւ, բարի եւ հաւատարիմ Իր ծառային: Մաղթում ենք, որ հոգեւորականի հոգեսնուցիչ սրբազան առաքելութեանը կոչուած Ձեր վաստակեալ կեանքը օրհնեալ լինի մխիթարութեամբ լեցուն բազում բարի օրերով:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ. ամէն:

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան
ի 16 Մայիսի յամի Տեառն 2000
եւ ի թուին Հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ 35